

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիա

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիայում կատարվում են փորձարական հետազոտություններ օրգանիզմների վրա էկոլոգիական և տեխնաձին գործոնների (թրթռում, թթվածնաքաղց), ինչպես նաև մտավոր ծանրաբեռնվածության ու քննական լարվածության պայմաններում ֆիզիոլոգիական գործառույթների կարգավորման մեխանիզմների և օրգանիզմի ռեգիստենտությունը բարձրացնող ոչ դեղորայքային միջոցների կիրառման ուսումնասիրության վերաբերյալ: Համակարգչային հատուկ մշակված ծրագրերով հետազոտվում են երկարավուն ուղեղի անդաստակային կորիզների նեյրոնային ակտիվության փոփոխությունները թրթռահարման և դելաբիթիթագիայի պայմաններում ու դրանց շտկումն ենթատեսաթմբի պրոլինով հարուստ նեյրոպեպտիդի կիրառման պայմաններում: Հետազոտությունների առանձին տարբերակում ուսումնասիրվում է հակաօքսիդիչներ կարմիր և սպիտակ երեքնուկների ազդեցությունն օրգանիզմի կոճղեզային շնչառական նեյրոնների ու կենսադաշտի վրա թթվածնաքաղցի պայմաններում: Լաբորատորիայի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում է նաև ուսանողների, վարժարանային սաների և նախադպրոցական հասակի հիվանդ (անզինա, թոքաբորբ) երեխաների սրտի գործունեությունը կարգավորող մեխանիզմների, հեմոդինամիկայի և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխություններն ուսումնական, ֆիզիկական ծանրաբեռնվածության և քննական մտավոր լարվածության պայմաններում ու դրանց շտկումը բուսական եթերային յուղերով:

Աշխատակիցներ՝

1. Մինասյան Սիրանուշ Մինասի, կենս.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, գիտ.
2. Սարգսյան Սուսաննա Հրաչի, կենս. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Գևորգյան Էմմա Սերգեյի, կենս. գիտ. թեկ., դոցենտ
4. Կարապետյան Մարիետտա, կենս. գիտ. թեկ., դոցենտ
5. Ադամյան Նոնա Յուրիկի, կենս. գիտ. թեկ., դոցենտ
6. Քսաջիկյան Նարինե Ներսեսի, կենս. գիտ. թեկ.
7. Ղուկասյան Լիլիթ Էդիկի, կենս. գիտ. թեկ.